ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան 0010,Հանրապետության հրապարակ,Կառավարական տուն 1, հեռ./37410/515708

«___» _____ 201__ թ. N _____

ՀՀ արտաքին գործերի նախարարի
տեղակալ պարոն Շավարշ Քոչարյանին

Հարգելի պարոն Քոչարյան,

Կից Ձեզ եմ ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի անբաժանելի մաս կազմող արձանագրությունների կնքման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքը:

Առդիր 2 էջ:

Հարգանքով՝

Սուրեն Կարայան

ՏԵՂԵԿԱՆՔ

2014թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի անբաժանելի մաս կազմող արձանագրությունների կնքման նպատակահարմարության վերաբերյալ

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների դրույթներով նախատեսվում է երկու առանձին արձանագրությունների (այսուհետ՝ Արձանագրություններ) ստորագրում, որոնք կհանդիսանան պայմանագրի անբաժանելի մասը:

Արձանագրություններից առաջինը նախատեսում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում և միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերում Ղրղզստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու կապակցությամբ կատարվող փոփոխությունները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում կատարված փոփոխությունները:[1]

---

[1] *«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրություն:*

Արձանագրություններից երկրորդը սահմանում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի և միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի՝ Ղրղզստանի կողմից կիրառման պայմանները և անցումային դրույթները[2]:

Արձանագրությունների հավելվածները կառուցվածքային առումով և կարգավորման առարկայով համապատասխանում են «Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներին:

Ըստ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014թ. դեկտեմբերի 23-ի թիվ 113 որոշման՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին հանձնարարվել է ԵՏՄ անդամ պետությունների կառավարությունների և Ղրղզստանի կառավարության հետ համատեղ ապահովել Արձանագրությունների նախապատրաստումը և ստորագրումը մինչև 2015 թվականի մարտի 1-ը: Հայաստանի Հանրապետությունը, ս.թ. հունվարի 2-ից հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության անդամ, պատրաստվում է ստորագրել Արձանագրությունները:

Ելնելով վերոգրյալից՝ Արձանագրությունների կնքումը համարում ենք նպատակահարմար:

---

[2] *«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու կապակցությամբ Ղրղզստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերի եւ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերի կիրառման պայմանների եւ անցումային դրույթների մասին» արձանագրություն:*